

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԽՈՍՏԻԿՅԱՆ

ՀՊՏՀ օտար լեզուների

ամբիանի դոցենտ

ԱԶԳԱԿԻՑ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Լեզուն բոլոր ժամանակներում եղել և մնում է մարդկության հաղորդակցման հիմնական միջոցը:

Այսօր հատկապես կարևորվում է օտար լեզվի ուսուցումը, և կրթության օջախները հաջողությամբ լուծում են այս խնդիրը:

Արդի պայմաններում, համընդհանրացման գործընթացին զուգընթաց, համալսարանները, որպես կրթության կարևորագույն հաստատություններ, կոչված են փոխելու մարդկանց լճացած մտածելակերպը գիտելիքի նկատմամբ: Պետական մակարդակով աստիճանաբար ընդունվում է շարունակական կրթության մոդելի կարևորությունը, որի միջոցով հնարավոր է լրացնել և հարստացնել տնտեսական, տեխնիկական, մտավոր և սոցիալ-մշակութային գիտելիքների ու հմտությունների պակասը՝ ապահովելով երկրների ներդաշնակ, բազմակողմանի զարգացումը, ներուժը փոխանցելով հետագա սերունդներին:

Շարունակական կրթությունը կոտրում է ժամանակի և հեռավորության կարծրատիպերն այնպես, ինչպես Եվրոպայում հարյուրամյակներ առաջ, երբ նորաստեղծ համալսարանների ուսանողները և դասախոսները շրջում ու գիտելիք էին տարածում ողջ մայրցամաքում:

Մեր՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի օտար լեզուների մասնագետների առջև ծառացած է ոչ դյուրին խնդիր՝ որոշակի բառապաշարի հիմքի վրա կառուցել, օրինակ՝ *տնտեսագիտական անգլերենի* հիմունքները և ապահովել տարբեր մասնագիտացումներին վերաբերող բնագիր նյութերի ուսումնասիրությունը ուսանողների լիարժեք հաղորդակցման և համագործակցության նպատակով:

Ներկայումս շարունակական կրթության մոդելը դժվար է պատկերացնել առանց ինքնուսուցման հայեցակարգի, ըստ որի ավանդական կրթական համակարգն աստիճանաբար իր տեղը զիջում է ինքնուսուցման գործընթացին, որտեղ ուսանողը դառնում է ուսումնառության ակտիվ մասնակից և հնարավորություն է ստանում ընտրություն կատարելու առարկաների, դրանց բովանդակության, դասավանդման մեթոդների միջև: Արդյունքում՝ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման ու կատարելագործման ընթացքում ձևավորվում են ուսանողի բնադատական մտածելակերպը և ստեղծարար հմտությունները, որոնք նպաստում են ուսումնական գործընթացում ծագող խնդիրների լուծմանը:

Տվյալ հոդվածում ցանկանում ենք անդրադառնալ ուսանողների շրջանում բավական հետաքրքրություն ներկայացնող, ընդհանուր և տնտեսագիտական անգլերենում հաճախակի հանդիպող ազգակից բառերին:

Անգլերենի ձևավորման և զարգացման ընթացքը ոչ խորությամբ ուսումնասիրելով անգամ, ինչպես նաև ժամանակակից լեզուն դիտարկելով՝ կարելի է եզրակացնել, որ բառապաշարի զգալի մասը կազմում են տարբեր, օրինակ՝ ֆրանսերենից, իսպաներենից, իտալերենից, պորտուգալերենից փոխառությունները:

Տարբեր լեզուներում հանդիպող, բայց միևնույն նշանակություն և հնչյունական մանություն ունեցող բառերը կոչվում են ազգակից (հարակից) բառեր: Մեր խնդիրն է հնարավորություն տալ ուսանողին այլ լեզուներով նույնպես ըմբռնելու տնտեսագիտական նյութի ընդհանուր բովանդակությունը՝ հենվելով ազգակից բառիմաստների և դրանց հաճախակի օգտագործման վրա: Այսպիսով՝ տնտեսագիտական անգլերենի ուսումնասիրության ընթացքում ուսանողները ոչ միայն յուրացնում և ամրապնդում են ձեռք բերված գիտելիքները, այլև աստիճանաբար սկսում են հասկանալ նյութի ընդհանուր բովանդակությունը այլ լեզուներում առկա նմանակ բառերի միջոցով:

Այժմ դիտարկենք անգլերեն և այլ եվրոպական լեզուներում հանդիպող որոշ տնտեսագիտական ազգակից եզրեր՝ զուգահեռներ անցկացնելով ըստ նմանության աստիճանի.

անգլ.	ֆրանս. ¹	իսպան. ²	իտալ.	գերման.
labo(u)r	labeur	labor	lavo'ro	-
machinery	machinerie	maquinaria	-	maschinerie
market	marche'	Mercado	mercato	Markt
merchant	marchand	mercader	mercante	-
direction	direction	directio'n	direzio'ne	Direktio'n
manual	manuel	manual	mano, manuale	manue'lle
production	production	produccio'n	produzio'ne	Produktio'n
net profit	net profit	neto profit	netto profitto	Profit
promotion	promotion	promocio'n	promozio'ne	Promotio'n
rent	rente	renta	re'ndita	Re'nte
organization	organization	organizacio'n	organizzazio'ne	Organizatio'n
installation	installation	instalacio'n	installazio'ne	Installatio'n
maintain	maintenir	mantener	mantene're	halten
article	article	arti'culo	arti'colo	Arti'kel
industry	industrie	industria	industria	Industri'e
(light)	(le'gere)	(ligera)	(legge'ra)	e'ichtindustrie
instruction	instruction	instruccio'n	instruzio'ne	Instruktio'n
institute	institut	instituto	instituto	Institu't

¹ Տե՛ս **Colins Gem**, Spanish – English, English – Spanish Dictionary, 1983:

² Տե՛ս **Потоцкая В., Потоцкая П.**, Французско-русский словарь. М., „Русский язык“, 1983:

scientific-	de recherches	de investigaciones	rice'rche	-
research	scientifiques	cientificas	scientifiche	-
product	produit	producto	prodo'tto	Produ'kt
objective	objectif	objective	obiettivo	-

Ըստ ներկայացված բառացանկի կարելի է եզրակացնել, որ անգլերենին ազգակից բառեր ավելի շատ հանդիպում են ֆրանսերենում և իսպաներենում, համեմատաբար քիչ՝ գերմաներենում: Օրինակ՝ **labor, merchant, objective, scientific-research** անգլերեն գիտաբառերը չունեն իրենց նմանակները գերմաներենում: Ուշադրության են արժանի նաև այն բառերը, որոնք հանդիպում են միևնույն կամ տարբեր լեզուներում, ունեն նման հնչողություն կամ գրություն, բայց այլ արմատներից են առաջացել, տարիմաստ են և կարող են սխալների պատճառ դառնալ: Այդ բառերը կոչվում են «թարգմանչի կեղծ ընկերներ» կամ «խաբուսիկ բառեր»:

Դիտարկենք որոշ օրինակներ՝ հիմք ընդունելով իսպաներենը: Այսպես՝ **parenties** բառը գրությամբ և հնչողությամբ նման է անգլերեն **parents** (ծնողներ) բառին, սակայն նշանակում է **ազգականներ**, իսկ **parents** բառը համապատասխանում է իսպաներեն **padres** բառին: **Largo** բառի անգլերեն համարժեքը ոչ թե **large**, այլ **long** բառն է, իսկ **large-ը** համապատասխանում է **grande** բառին: **Carpeta** բառն առաջին հայացքից անգլերեն **carpet** (գորգ) բառին է համապատասխանում, սակայն պարզվում է, որ անգլերենում **folder** (թղթապանակ) իմաստն ունի: Ավելին, **complexion** բառն անգլերեն **complexion** (մաշկի գույն) բառի ճիշտ նույն հնչողությունը և գրությունն ունի, բայց իսպաներենում և ռուսերենում նշանակում է **մարդու կառուցվածք**:

Նմանատիպ «կեղծ» բառերի կարելի է հանդիպել ֆրանսերենում, բրիտանական և ամերիկյան անգլերենում, ռուսերենում, գերմաներենում և այլ լեզուներում: Օրինակ՝ ֆրանսերենում **importe** բառը նշանակում է **բռնկվող, տաքարյուն** և չի համընկնում է անգլերեն **import** բառի հետ, **homme** բառի նշանակությունն է **տղամարդ, մարդ**, այլ ոչ թե **տուն**, իսկ **court** բառը նշանակում է **կարճ**, ոչ թե **դատարան, արքունիք**: Հետաքրքրական է անգլերեն **magazine** բառը: Այն համընկնում է ռուսերեն **магазин** և ֆրանսերեն **magasin** բառերի հետ, որոնք **խանութ** են նշանակում: Իրականում անգլերեն **magazine** և ֆրանսերեն **magazine** բառերի իմաստը **պատկերազարդ ամսագիր** է, իսկ գերմաներեն **man** բառը նշանակում է **միայն**, այլ ոչ թե **տղամարդ**, ինչպես անգլերենում է:

Բրիտանական և ամերիկյան անգլերենի լեզվապաշարում հանդիպում են միևնույն հնչողությամբ, բայց տարբեր նշանակությամբ բառեր: Օրինակ՝ **cowboy** բառը ամերիկյան անգլերենում նշանակում է **նախրապան**, իսկ բրիտանականում՝ **անագնիվ, խարդախ անձնավորություն, apartments-ը** ամերիկյանում **բնակարան** է, բրիտանականում՝ **շքասենյակներ**:

Կարելի է բազմաթիվ այլ օրինակներ ևս բերել, սակայն, հիմք ընդունելով ներկայացվածները, ամբողջացնենք ասելիքը. նկատի ունենալով օտար լեզուների ուսուցմանը տրամադրվող սահմանափակ ժամաքանակը,

կարծում ենք, հատկապես համաշխարհային տնտեսագիտություն ուսումնասիրող ուսանողների մտահորիզոնը ընդլայնելու և ուսուցանվող լեզվի միջոցով եվրոլեզուներում ազգակից բառեր գտնելու, մասնագիտական անգլերենի բառապաշարը ամրապնդելու և հարստացնելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար դասաժամի որոշակի հատված տրամադրել նշված լեզուներից որևէ մեկով տնտեսագիտական նյութերի ներկայացմանը՝ սկզբում առանձնացնելով և մեկնաբանելով գիտաբառերը, այնուհետև ընկալելի դարձնելով ողջ նյութի իմաստը:

Այժմ ներկայացնենք մարքեթինգի մասնագիտացմամբ ուսանողների համար ֆրանսերենով **«La distribution»** դասից մի հատված՝ նախ ուշադրությունը հրավիրելով ազգակից գիտաբառերի, ապա նյութի ընդհանուր բովանդակության վրա:

L'objectif de la distribution est de relier les deux phases de production et de consommation. վերոնշյալ նախադասության հայտնի ազգակից գիտաբառերի հիման վրա ուսանողները կարողանում են ըմբռնել, որ *«Բաշխման նպատակով պետք է միացնել արտադրության և սպառման փուլերը»*: Ըստ մեկ այլ՝ **Pour les produits de grande consommation, il existe plusieurs catégories de grands magasins: Les grands magasins et magasins populaires: les supermarchés et les hypermarchés** նախադասության՝ *«Բազմազան խանութներ գոյություն ունեն, որպեսզի ապրանքը լայն սպառում ունենա: Դրանց թվում են խոշոր, զանգվածային խանութները՝ սուպերմարկետներն ու հիպերմարկետները»*:

Բանկային գործի մասնագիտացմամբ ուսանողների համար **«La Banque»** դասի **Le système bancaire et financier français est créé en 1800, nationalize en 1945; La banque de France a le monopole de l'émission des billets de banque** հատվածից կարելի է հասկանալ, որ ֆրանսիական բանկային և ֆինանսական համակարգերը ստեղծվել են 1800 թ., ազգայնացվել՝ 1945-ին, և որ Ֆրանսիայի բանկը թղթադրամներ թողարկելու մենաշնորհ ունի: **«Le marketing»** դասի **Le marketing s'est d'abord intéressé aux activités ayant trait à la vente elle-même; fixation du prix, transport, stockage, manutention et distribution de la merchandise aux grossiste et aux détaillants** նախադասության ծանոթ ազգակից գիտաբառերի օգնությամբ ուսանողները հասկանում են, որ տվյալ նյութում ներկայացվում են մարքեթինգային գործունեության հիմնական տարրերը՝ գնորոշումը, փոխադրամիջոցները, պահեստավորումը, մեծածախ ու մանրածախ առևտրի միջոցով ապրանքների բաշխումը:

Նման մոտեցմամբ, կարծում ենք, ավելի հետաքրքիր ու բազմաբնույթ է դառնում ուսանողների ամենօրյա աշխատանքը՝ տրամադրելով նրանց ուսուցանվող լեզվի ավելի խոր ուսումնասիրության, միաժամանակ ավելի հասանելի է լինում այլ օտար լեզուներով մասնագիտական գիտելիքների ձեռքբերումը:

РУЗАННА ХОСТИКЯН

Доцент кафедры

„Иностранных языков” АГЭУ

Значимость родственных слов в процессе преподавания иностранных языков.— Статья упоминает роль родственных слов и терминов в процессе преподавания экономического английского по разным специальностям и специализациям в АГЭУ. Основная идея статьи заключается в том, что студенты извлекают пользу, а также имеют заинтересованность в хорошем обучении экономического английского, так как посредством родственных терминов они учатся понимать основную мысль подобных текстов на других языках, например, на французском, испанском, итальянском, немецком и других языках. Статья также упоминает о ложных друзьях (ложных родственных словах).

RUZANNA KHOSTIKYAN

Associate Professor at the Chair

of „Foreign Languages” at ASUE

The Significance of Cognates in the Process of Teaching Foreign Languages.— The article as mentioned in the title refers to the role of cognates in teaching economic English in different specialties in ASUE. The major idea of the article is that students are interested and benefit from thoroughly studying specialty English as they learn to simultaneously comprehend economic texts in other European languages through cognate words and terms. The interest of students towards **false cognates**, also called **false friends**, is mentioned in the article.